International Sociological Association

Սոցիոլոգիայի ժամանակը

Այժմ, երբ պետական առաջնորդներր խթանում են անվստահություն գիտության հանդեպ, իսկ հարձակումները հասարակական գիտությունների վրա բազմապատկվում են,
Այժմ, երբ *ապատեղեկատվությունը* տարածվում է ավելի լայնորեն և ավելի մեծ ազդեցությամբ, քան հետազոտությունների վրա հիմնված վերլուծությունները,
Այժմ, երբ շատ քաղաքական առաջնորդներ տարածում են ատելության խոսք և զրկում են բնակչության մի մասին լիարժեք քաղաքացիության իրավունքից,
Այժմ, երբ մարդկանց ամբողջական դասերի ապամարդկայնացումը կրկին դառնում է իշխանությունը հաստատելու և ամրապնդելու լայն տարածում ունեցող գործիք,
Այժմ, երբ գիտական ապացույցները մերժվում են՝ համակարգային բնապահպանական և հասարակական արտակարգ իրավիճակներն անտեսելու համար,
Այժմ, երբ պետությունները ճնշում են գործադրում նրանց նկատմամբ, ովքեր խոսում են ցեղասպանության, համակարգային բռնության և ռասիզմի դեմ,
Այն ժամանակ, երբ հարստության աննախադեպ կենտրոնացումը թույլ է տալիս փոքր թվով մուլտիմիլիոնատերերի վերահսկել զանգվածային և սոցիալական լրատվամիջոցները,
Այժմ, երբ մարդկությունը բախվում է փոխկապակցված համաշխարհային ճգնաժամերի, որոնք կորոշեն գալիք սերունդների կյանքը,
Այժմ, երբ ակադեմիական ազատությունը սպառնալիքի տակ է, նույնիսկ կայացած ժողովրդավարություններում:

Մենք հավատում ենք, որ հասարակագետների կողմից քննադատական միջամտություններն առավել էական են, քան երբևէ:

Եվ մենք վերահաստատում ենք մեր՝ որպես հետազոտողների, մանկավարժների և հանրային մտավորականների աշխատանքի հիմքում ընկած արժեքներն ու հանձնառությունները:

Մենք պաշտպանում ենք՝

- Փաստերի և վերլուծության վրա հիմնված **ճշգրիտ սոցիոլոգիան**, որը մերժում է պարզեցված պատմություններն ու ընդունում աշխարհի բարդությունը:

- **Անկախ սոցիոլոգիան,** որը հիշեցնում է մեզ, որ իշխանություն ունեցողների խոսքերը միշտ չէ, որ ճշմարիտ են, և որ հազար անգամ կրկնած սուտը միևնույն է, սուտ է:
- **Քննադատական սոցիոլոգիան,** որը հարցականի տակ է դնում աճող անհավասարությունները և մարտահրավեր նետում «*ինքնաստեղծ մարդու*» առասպելին, շուկաների և սպառողականության վրա պարզունակ շեշտադրմանը, և ալֆա-արականությանը:
- **Հանրային սոցիոլոգիան,** որը ներգրավված է քաղաքացիական քննարկումներում ոչ թե ենթադրյալ մտավոր գերազանցության պատվանդանից, այլ երկխոսության մեջ այն մարդկանց հետ, ովքեր ձգտում են փոխելու հասարակությունը և պաշտպանելու ընդհանուր բարօրությունը:
- **Ընդհանուր սոցիոլոգիան,** որը դիմադրում է գերմասնագիտացման և մասնատման ռիսկերին՝ անդրադառնալով մեր ժամանակի հրատապ խնդիրներին:
- **Համաշխարհային սոցիոլոգիան,** որը սովորում է աշխարհի տարբեր հատվածներից եկած հետազոտողներից և սոցիալական դերակատարներից՝ հասկանալու և դիմակայելու 21-րդ դարի մարտահրավերները, և նպաստում է համընդհանուր մարդկայնության գիտակցության ձևավորմանը:

Մենք խորապես համոզված ենք, որ հասարակական գիտությունները և ակադեմիական ազատությունը ներհատուկ են ժողովրդավարությանը և պետք է պաշտպանվեն ու խթանվեն:

Մենք հավատում ենք, որ իրազեկ, պատմականորեն հիմնավորված և սոցիոլոգիական առումով պատշաճ հանրային բանաբեռը կենսական նշանակություն ունի մեր ժամանակների ճգնաժամերը հասկանալու և դրանցում կողմնորոշվելու համար:

Մենք համոզված ենք, որ սոցիոլոգիան ոչ միայն օգնում է մեզ հասկանալ աշխարհը, այլև կառուցել ավելի արդար, տանելի, խաղաղ և կայուն ապագա:

Կլիմայի փոփոխության, պատերազմի, աճող անհավասարության և ատելության ժամանակաշրջանում սոցիոլոգիան դարձել է անփոխարինելի գործիք՝ սահմանափակ ռեսուրսներով մոլորակի վրա գոյակցելու համար:

Հայտարարությունը ներկայացվել է Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի (ISA) նախագահ Ջեֆրի Պլեյերսի կողմից 2025 թվականի հուլիսի 6-ին՝ Ռաբաթում անցկացված սոցիոլոգիայի 5-րդ ֆորումի ընթացքում: Այն աջակցություն է ստացել ISA-ի նախկին նախագահներ Սարի Հանաֆիի, Մարգարեթ Աբրահամի և Միշել Վիևիորկայի կողմից, ինչպես նաև ներկայիս փոխնախագահներ Էլիսոն Լոկոնտոյի, Մարթա Սոլերի և Էլինա Օինասի կողմից: Աջակցություն են հայտնել նաև Եվրոպական և Լատինաամերիկյան սոցիոլոգիական ասոցիացիաների նախագահներ Կայա Գադովսկան, Խեսուս Դիասը և Լատինաամերիկյան Սոցիալական Գիտությունների Խորհրդի (CLACSO) ներկայացուցիչ Պաբլո Վոմարոն:

Ռաբաթ, հուլիս 2025